# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**« ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 » գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

գ.Մեղրաշեն

09 հուլիսի 2021թ.
Ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ.Սարդարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մինասյան
Ա.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. ***Հանձնաժողովի նիստի օրակարգը***
*Շ.Սարդարյան*

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հայտերի բացման մասին,
3. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունների շտկման մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

***2. Հայտերի բացման մասին***
*Շ.Սարդարյան*

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները

| ՀՀ | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ | 05550663 | ՀՀ Շիրակի մ. Ք.Արթիկ, Գր Լուսավորիչ 2-րդ նրբ, տ 9: | 091324890 | i-construction@bk.ru@gmail.com |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

***3.Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու, ներկայացնելու ու ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մասին***
*Շ.Սարդարյան*

<<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>>ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել ու ներկայացվել է Հրավերով սահմանված պահանջներին և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, սակայն առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.
1. <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>>ՍՊԸ–ի կողմից ներկայացրած հայտում Աշխատանքների կատարման ծավալաթերթում *Քարե պարսպի՝ բնահողի հետլիցք ձեռքով տեղափոխելով 20կմ* տողի ծավալը չի համապատասխանում հրավերով սահմանված ծավալին:
2. Առկա է մասնակցի կողմից հայտով ներկայացրած ծավալաթերթի բոլոր բաժինների մասով կշիռների և հրավերով սահմանված նույն բաժինների կշիռների միջև շեղում, որը գերազանցում է 10%-ը:

*Համաձայն հրավերի 4-րդ բաժնի 4,3 մասի 4-րդ կետի.*

4) շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

**4.Անհամապատասխանությունների շտկման մասին**

Շ.Սարդարյան

Հանձնաժողովը որոշեց <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ին ծանուցել անհամապատասխանության մասին՝ առաջարկելով այն շտկել 1 աշխատանքային օրվա ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41 կետի:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Շ.Սարդարյան

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և հաջորդ նիստը հրավիրել <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ -ից , անհամապատասխանության շտկումը ստանալուց հետո, 15.07.2021թ-ին ժամը 10:00-ին Մեղրաշենի համայնքապետարանի շենքում ՝ Մեղրաշեն համայնք, 1-ին փող. 6-րդ շենք հասցեում :

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0*

Հանձնաժողովի
նախագահ՝ Շ.Սարդարյան

Անդամներ՝ Ս. Մինասյան

Ա. Մինասյան

Քարտուղար Է.Գրիգորյան